Կոմիտաս

Աշուն Օր

Սեւուկ ամպեր վար եկան
Օրան, օրան,
Սարի վրայ շար եկան:
Ծագեց առաւօտ
Պաղեց, սառաւ օդ:

Գոռաց երկինք. բուք արաւ,
Հեւաց, հեւաց.
Ծերուկ երկիր սուգ արաւ:
Ճաքեց հեռուն ամպ,
Երկիր դողաց-բա՛մբ:

Բողբոջ արեւ շող կապեց,
Դողաց, սողաց,
Արիւն-ամպից քօղ կապեց:
Վառեց լեռան լանջ,
Լեռան ցաւատանջ:

Տեղաց անձրեւ մաղ տալով,
Մարմանդ-մարմանդ,
Յոգնած տերեւ շաղ տալով:
Երկիր քուն դրրաւ,
Եւ թռչուն թրռաւ:

Յուզուած առուն փախ տուաւ
Սողուն-սողուն,
Ձորում մշուշ կախ տուաւ:
Քամին ելաւ վեր,
Արաւ տարուբեր:

Մոխիր ամպեր ժիր եկան
Դալուկ-դալուկ,
Սարի վրայ ցիր եկան:
Հալեց աշուն օր
Կեանքիս սեւաւոր: